ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«25» հունիսի 2018 թվականի № 71-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 12-ի՝ բնակչության ջեռուցման ժամանակահատվածի ընթացքում սպառված բնական գազի վճարումները տարեկան կտրվածքով համահարթեցնելու վերաբերյալ հանձնարարականի կատարման նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին՝ մինչև 2018թ. եռամսյա ժամկետում համապարփակ քննարկել բնակչության ջեռուցման ժամանակահատվածի ընթացքում սպառված բնական գազի վճարումները տարեկան կտրվածքով համահարթեցնելու վերաբերյալ հարցը և ներկայացնել առաջարկություն:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը թողնում եմ ինձ:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
2018թ. հունվարի «25»-ի
71-Ա հրամանի

ԿԱԶՄ

աշխատանքային խմբի

Գարեգին Բաղրամյան	- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար)
Բորիս Գյուլումյան	- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Աշոտ Ուլիխանյան (համաձայնությամբ)	- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ
Սերգեյ Աղինյան (համաձայնությամբ)	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի զարգացման և մոնիթորինգի վարչության պետ
Վարուժան Օհանջանյան (համաձայնությամբ)	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ստուգումների թիվ 2 բաժնի պետ
Աշոտ Հակոբյան (համաձայնությամբ)	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետ
Կարեն Մովսեսյան (համաձայնությամբ)	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ էկոնոմիկայի և ֆինանսների գծով
Դավիթ Մելքոնյան (համաձայնությամբ)	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի խորհրդական